ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/87

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն

Վ. Ծատուրյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 286.110.66971)

լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 19.12.2019թ.)

ՀՀ ոստիկանության լիազորված ներկայացուցիչներ՝

Վ. Մուրադյան (լիազորագիր տրված՝ 23.12.2019թ.)

Օ.Գևորգյան (լիազորագիր տրված՝ 23.12.2019թ.)

Ա.Կանդալյան (լիազորագիր տրված՝ 23.12.2019թ.)

Քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար գլոբալ ցանցի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3»

ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. ներկայացված և 20.12.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/87 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Գլոբալ ցանցի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթ:

«ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացումը նշանակված է 20.12.2019թ.:

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»՝ գնման առարկայի՝ «Տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման կենտրոնացված համակարգ» համար սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը /ներկայացվում է հատված/.

-Այն իրենից պետք է ներկայացնի ծրագրային փաթեթից և տվյալների հաղորդման սարքերից բաղկացած ամբողջական համակարգ:

-Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝

- բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
- օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
- յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

Պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց

հետո 25 օրվա ընթացքում: 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում...:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակովմասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Բողոքաբերի կարծիքով, հրավերի տեխնիկական բնութագիրը մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար, առաջացնում է չհիմնավորված խոչընդոտներ, իսկ նրա որոշ հատվածներ օբյեկտիվորեն հիմնավորված չեն և համարժեք չեն այն կարիքին, որի նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Մասնավորապես, ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որպեսզի համակարգը պարտադիր ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝

- բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
- օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
- յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

Այպիսով, հրավերով պահանջվել է, որ համակարգը ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող և մեկ այլ ընկերության կողմից մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ, որն ոչ մի կապ չունի մրցույթով հայտարարված համակարգի հետ:

Խնդիրը կայանում է նրանում, որ ընթացակարգով պահանջված համակարգով միանշանակ հնարավոր է ապահովել, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաները՝ բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում), օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության, յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

Նշված ֆունկցիաների պահանջը լիովին օբյեկտիվ է և համապատասխանում է պատվիրատուի կարիքին:

Սակայն պատվիրատուի պահանջն առ այն, որ ընթացակարգով պահանջված համակարգը պարտադիր ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, ինքնանպատակ է, չի բխում պատվիրատուի պահանջներից, քանի որ առանց ընտեգրվելով մեքենաների վրա տեխանդրված GPS վերահսկման համակարգի հետ, ընթացակարգով պահանջված համակարգը կարող է ապահովել ընթացակարգով պահանջված բոլոր ֆունկցիաները:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքը քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն կարևորագույն հանգամանքի վրա, որ սույն ընթացակարգով պահանջված համակարգը ՊՊԳՎ-ում գործող և մեկ այլ ընկերության կողմից մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ ընտեգրելը հնարավոր է միայն մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան կոդերը ունենալու դեպքում: Մինչդեռ ակնհայտ է, որ այդ կոդերը ունի բացառապես այդ համակարգը պատրաստած և տեղադրած ընկերությունը: Եվ պատվիրատուի կողմից հրավերով նման պահանջ սահմանելը բացառապես նշանակում է, որ այդ համակարգերի ինտեգրումը հնարավոր է միայն մեքենաների վրա GPS վերահսկման համակարգ տեղադրված ընկերության կողմից համապատասխան կոդերը տրամադրելու դեպքում, ինչը կամայականությունների տեղիք է տալիս: Ավելին, գտնում ենք, որ նման պահանջ սահմանելը ուղղակիորեն կհանգեցնի նրան, որ սույն ընթացակարգին հայտ կներկայացնի կամ միայն մեքենաների վրա GPS վերահսկման համակարգ տեղադրված ընկերությունը, կամ նրա աջակցությունը ստացած մեկ այլ ընկերություն, ինչը վերացնում է մրցակցության որևէ դրսևորման հնարավորություն:

Վիճարկվող ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի որոշ հատվածներում գնման առարկայի պայմանները չեն նկարագրված ամբողջական և չեն ներառում բոլոր պայմանները, ինչպես դա պահանջում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-ր կետը և 3-րդ մասը:

Մասնավորապես, հրավերով սահմանվել է, որ պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում: 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում:

Վերոհիշյալ ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ հստակ սահմանված չեն, թե համակարգի տվյալների հաղորդման սարքերը 25-րդ օրվանից հետո ինչ քանակով օբյեկտներում և քանի հատ պետք է տեղադրվեն: Ընդամենը ամրագրած է, որ 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում, իսկ արդեն 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում: Բայդ թե ինչ քանակությամբ և ինչ ժամկետներում՝ անհայտ է:

Հրավերի այս պահանջ էլ խախտում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-ր կետը և 3-րդ մասի պահանջները և զրկում մասնակցին ներկայացնելու հիմնավորված գնային առաջարկ /չկա տեղեկատվություն, թե քանի սարք է պահանջվելու/ և պատկերացում կազմելու տեղադրման աշխատանքների ժամկետների մասին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդում է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Գլոբալ ցանցի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է, որ սույն բողոքի քննության նպատակով 23.12.2019թ. հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի՝ ՀՀ ոստիկանության կողմից հնչեցված դիրքորոշումների հետ կապված ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ա) Հրավերով պահանջված Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝

- բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
- օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
- յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:.....

Այսպիսով, հրավերով պահանջվել է, որ համակարգը ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող և մեկ այլ ընկերության կողմից մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ, որն ոչ մի կապ չունի մրցույթով հայտարարված համակարգի հետ:

Այս պահանջի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Նախ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ընթացակարգով պահանջված համակարգով միանշանակ հնարավոր է ապահովել, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաները՝ բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում), օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության, յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը: Սակայն պատվիրատուի պահանջն առ այն, որ ընթացակարգով պահանջված համակարգը պարտադիր ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, ինքնանպատակ է, չի բխում պատվիրատուի պահանջներից, քանի որ առանց ընտեգրվեու մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ՝

ընթացակարգով պահանջված համակարգը կարող է ապահովել ընթացակարգով պահանջված բոլոր ֆունկցիաները: Եթե պատվիրատուի համար, մեր կարծիքով՝ չհիմնավորված, պարտադիր էր այս երկու համարգերի ինտեգրումը մեկը մյուսին, ապա Պատվիրատուն առնվազն պետք է այս երկու մրցույթները միավորեր և պահանջեր մեկ միասնական համակարգի ներդնում՝ բողոքում նշված խնդիրներից (օրինակ ինտեգրման կոդերի համադրումից) խուսափելու համար:

Պատվիրատուի պնդումը առ այն, որ եթե պահանջված համակարգը չինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, ապա ընթացակարգով պահանջված համակարգի աշխատելու համար պահանջվել են լրացուցիչ պլանշետներ /սմարտֆոններ/, ինչը կարող է լրացուցիչ բեռ հանդիսանալ պետական բյուջեի համար, իրականությանը չի համապատասխանում: Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայումս ՊՊԳՎ-ի մեքենաները արդեն իսկ ապահովված են պլանշետներով /սմարտֆոններով/ և վերոհիշյալ տեխնիկան գնելու համար հայտարարվել էր մրցույթ: Ավելին, պատվիրատուի կողմից մրցույթի միջոցով անգամ Բիլայն ընկերությունից ձեռք են բերվել սիմ քարտեր նշված պլանշետների /սմարտֆոնների/ համար: Ուստի սույն մրցույթով պահանջված համակարգը հենց մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ կապելը, գտնում ենք, ինքնանպատակ է:

Պատվիրատուի հայտարարությունը առ այն, որ նախկին տարիների հրավերներով պահանջված ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ պահանջված համակարգի ինտեգրումը խտրական չի եղել և չի խոչընդոտել այլ մասնակիցների համար տվյալ մրցույթին մասնակցելու համար, իրականությանը չի համապատասխանում, քանի որ նախկին մրցույթների հրավերներով երբևիցե չի եղել պահանջ՝ մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ ինտեգրվելու մասով, ինչի արդյունքում նախկին մրցույթներին մասնակցել են բազմաթիվ ընկերություններ:

Ինչպես հայտնել էինք ներկայացված բողոքով, սույն ընթացակարգով պահանջված համակարգը ՊՊԳՎ-ում գործող և մեկ այլ ընկերության կողմից մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ ընտեգրելը հնարավոր է միայն մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան կոդերը /протокол/ ունենալու դեպքում: Մինչդեռ ակնհայտ է, որ այդ կոդերը ունի բացառապես այդ համակարգը պատրաստած և տեղադրած ընկերությունը: Եվ պատվիրատուի կողմից հրավերով նման պահանջ սահմանելը բացառապես նշանակում է, որ այդ համակարգերի

ինտեգրումը հնարավոր է միայն մեքենաների վրա GPS վերահսկման համակարգ տեղադրված ընկերության կողմից համապատասխան կոդերը տրամադրելու դեպքում, ինչը կամայականությունների տեղիք է տալիս: Պատվիրատուի այն պնդումը, որ վերոհիշյալ կոդերը կտրամադրվեն տվյալ ընթացակարգի հաղթող մասնակցին, նույնպես չի բխում հրավերի պահանջներից, քանի որ նման դրույթ վերոհիշյալ հրավերը չի պարունակում, իսկ դա նշանակում է, որ պատվիրատուն նման պարտավորություն չի կարող կրել: Գտնում ենք, որ նման դեպքում հրավերի տեխնիկական բնութագիրը առնվազն պետք է պարունակեր պահանջ, որ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ հաջորդ օրը պատվիրատուն պայմանագրի մյուս կողմին է տրամադրում մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան կոդերը /протокол՝ պրոտոկոլները/:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա. եթե անգամ պատվիրատուի վրա դրվելու է պարտականություն տրամադրելու պայմանագրի կողմին մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան կոդերը /протокол՝ պրոտոկոլները/, ապա անհրաժեշտ է, որպեսզի Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում հստակ նշվի, թե GPS վերահսկման համակարգը որ դասի /կատեգորիայի/ կոդերով՝ պրոտոկոլներով, է աշխատում: Բանն այն է, որ Ընթացակարգի մասնակիցը նախապես չիմանալով, թե կոնկրետ որ տեսակի, դասի կոդերով՝ պրոտոկոլներով է միանալու իր համակարգը GPS վերահսկման համակարգի հետ, չի կարող վստահ լինել, որ իր կողմից առաջարկվող համակարգը համադրելի է, ինտեգրելի մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ: Հրավերով այս տեղեկատվությունը ստանալու արդյունքում ընթացակարգի մասնակիցը կարող է հիմնավորված որոշում կայացնի տվյալ ընթացակարգին իր մասնակցության հնարավորության մասին:

բ) Պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում

Ընկերությունը գտնում է, որ իրատեսական չէ ընթացակարգի հրավերով սահմանված հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքների համար նախատեսված ժամկետները: Մասնավորապես, հրավերով սահմանվել է, որ պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում: Բանն այն է,

որ տեսականորեն հնարավոր չէ 25 օրվա ընթացքում ողջ Հայաստանի տարածքով պահպանվող 3820 օբյեկտներում տեղադրել համակարգի տվյալների հաղորդման սարքեր: Այս ժամկետը կարող է իրատեսական լինել բացառապես այն ընկերության համար, որը նախկին տարիների ընթացքում /օրինակ, հենց 2019թ./ հաղթել է տվյալ գնման առարկայով մրցույթը, բոլոր 3820 օբյեկտներում արդեն իսկ տեղադրել է համակարգի տվյալների հաղորդման սարքերը, և 2020թ. համար կրկին նույն գնման առարկայով մրցույթը հաղթելու դեպքում ընդամենը առանց նոր տեղադրման աշխատանքներ կատարելու՝ արդեն իսկ տեղադրված սարքերով ընդամենը կշարունակի մատուցել ծառայություններ: Իսկ տվյալ դաշտ մտնող նոր մասնակցի համար սահմանված անիրական ժամկետը անհաղթահարելի խոչընդոտ կհադիսանա՝ աշխատանքը սահմանված ժամկետում իրականացնելու համար:

Բողոքներ քննող անձին Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ, որ Ընկերության ունեցած տեղեկությունների համաձայն՝ անցած ժամանակահատվածում թե՛ մեքենաների վրա GPS վերահսկման համակարգի տեղադրումը, թե՛ գլոբալ ցանցի աշխատանքների իրականացումը՝ համապատասխանաբար 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքեր տեղադրվելով, կատարվել է նույն ընկերության կողմից, և վիճարկվող ընթացակարգի հարվերով նախատեսվել են այնպիսի պայմաններ, որոնք ձեռնտուն են բացառապես այդ ընկերությանը և իրատեսական են կատարման տեսանկյունից միայն վերջինիս համար:

Մևնույն ժամանակ բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ, որ նախկին տարիների մրցույթներով սարքերի տեղադրման համար նման կարճ ժամանակահատված երբևիցե սահմանված չի եղել:

գ) 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում ...

Հրավերի վերոհիշյալ ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ հստակ սահմանված չեն, թե համակարգի տվյալների հաղորդման սարքերը 25-րդ օրվանից հետո ինչ քանակով օբյեկտներում և քանի հատ պետք է տեղադրվեն: Ընդամենը ամրագրած է, որ 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում: Բայդ թե ինչ քանակությամբ և ինչ ժամկետներում՝ անհայտ է:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնելով, որ նիստի ժամանակ պատվիրատուն չկարողացավ անգամ մոտավորապես նշել, թե լրացուցիչ քանի օբյեկտում քանի սարքավորումներ, և կարևորը՝ նվազագույն ինչ ժամկետում, պետք է տեղադրվեն: Գտնում ենք, որ այստեղ պետք է հստակ նախատեսվի ընդնահուր սարքավորումների առավելագույն թիվը, ինչպես նաև յուրաքանչյուր սարքավորումը տեղադրելու նվազագույն ժամանակահատվածը, քանի որ հակառակ դեպքում պատվիրատուն հնարավորություն է ունենում դրսևորել կամայականություն, իսկ մասնակիցը զրկվում ներկայացնելու հիմնավորված գնային առաջարկ:

Ի մի բերելով վերոհիշյալը, Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Գլոբալ ցանցի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի հրավերը խտրական է, առաջացնում է չհիմնավորված խորընդոտներ, չի նպաստում մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չի խրախուսում նրաց միջև մրցակցությունը: Առանձին դեպքերում գնման առարկան նկարագիրը ամբողջական չէ և չի պարունակում պայմանների ամբողջական և համարժեք նկարագրություն:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի պահանջների խախտում: Եվ պատահական չէ, որ նման հրավերի պայմաններում տվյալ գնման ընթացակարգին ոչ մի մասնակից հայտ չի ներկայացրել:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով, որ Ընթացակարգի հայտերի ներկայացման ժամկետը դեռևս ավարտված չէ, իսկ Հրավերը հակասում է Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին, ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝«Գլոբալ ցանցի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.12.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

3. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ոստիկանությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Բողոքաբերի այն կարծիքը, որ տեխնիկական բնութագրով պահանջվում է որպիսի «համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ», այս պահանջը չի առաջացնում խոչընդոտ և կամայականությունների տեղիք չի կարող տալ քանի որ ՊՊԳՎ ավտոմոբիլային տրանսպորտի վերահսկման (GPS վերահսկման) ծառայության մատուցման ձեռքբերման տեխնիկական բնութագրում առկա են հետևյալ պահանջները՝

- Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի կողմից կամ մասնակիցը պետք է ունենա դրանցում փոփոխություններ կատարելու հնարավորություն և իրավունք՝ ՊՊԳՎ-ում գործող այլ ծրագրային համակարգերի հետ ինտեգրման նպատակով:
- Ավտոմոբիլային տրանսպորտի վերահսկման համակարգը պետք է ինտեգրվի օբյեկտների պահպանության կենտրոնացված կառավարմամբ համակարգի հետ, մասնավորապես՝ պետք է ստեղծվի անհրաժեշտ տվյալների ընդունման և հաղորդման հնարավորություն:

Հետևաբար մեքենաների GPS վերահսկման ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է ստեղծել անհրաժեշտ տվյալների ընդունման և հաղորդման հնարավորություն ցանկացած այն կազմակերպությանը, որը ՀՀ Ո ԲՄԾԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3 ծածկագրով բաց մրցույթում հաղթող կճանաչվի:

Վերլուծելով վերոգրյալը նշեմ, որ ՊՊԳՎ-ն ունի ներդրած անվտանգության ծրագրային այլ համակարգեր, այդ թվում GPS համակարգը, որոնց սպասարկող հիմնարկները նույն պայմաներով են մասնակցում ելնելով իրենց սարքավորումների և ծառայությունների բնույթից:

Նույն պայմանների ցանկին է դասվում՝ Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի կողմից կամ մասնակիցը պետք է ունենա դրանցում փոփոխություններ կատարելու հնարավորություն և իրավունք՝ ՊՊԳՎ-ում գործող այլ ծրագրային համակարգերի հետ ինտեգրման նպատակով:

Ինչն իր հերթին հիմնազուրկ է դարձնում բողոքաբերի այն մտավախությունը, որ այդ ծածկագրերը չեն տրամադրի իրենց, որպիսի նրանք կարողանան ինտեգրվեն ՊՊԳՎ-ի կողմից օգտագործվող համակարգերի հետ:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ իրատեսական չէ ընթացակարգի հրավերով սահմանված հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքների համար նախատեսված ժամկետը, ապա նշեմ, որ այդ ժամկետը չի հանդիսանում զուտ ցանկություն:

Այն բխում է ՊՊԳՎ-ի կողմից կատարվող գործառույթներից և պայմանավորված է միայն նրա գործունեության առանձնահատկություններից: Այսինքն ՊՊԳՎ-ն 24 ժամյա ռեժիմով իրականացնում է օբյեկտների անվտանգության ապահովում, որի շրջանակներում և ելնելով այդ ռեժիմից անհրաժեշտ է որպիսի որքան հնարավոր է շուտ տեղադրվեն այդ համակարգերը:

Նշենք, որ այս պահի դրությամբ նման ծառայություն մատուցվում է ՊՊԳՎ-ին և նրանք նախորդ հայտարարված մրցույթին նույն պայմաններով ապահովել են այդ համակարգի տեղադրումը:

ՊՊԳՎ-ին նույն ծառայությունը մատուցող կազմակերպության հետ 2019թ-ի դեկտեմբերին ավարտվում է պայմանագրի ժամկետը և ՊՊԳՎ-ն իրավունք ունի օգտվել նրանց ծառայությունից ընդամենը մեկ ամիս ժամկետով, որից հետո եթե տեղադրված չլինեն մրցույթով շահած կազմակերպության սարքերը, ապա կստացվի, որ ՊՊԳՎ-ի գործողությունը ուղղակի չի կարող իրականցվել: Ինչի արդյունքում հնարավոր է, որ պահպանվող օբյեկտներին պատճառվի վնասներ:

Հիմք ընդունելով, որ նախկինում իրականացված հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները կատարվել են նույն ժամանակահատվածում, ապա գտնում ենք, որ 25-օրյա ժամկետն ավելին քան հիմնավոր է եթե կազմակերպությունը, որը կմասնակցի և հաղթող կճանանչվի համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Այսինքն ունի՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ:

Ինչ վերաբերվում է տվյալ պահին ծառայությունը մատուցող կազմակերպությանը, ապա բողոքաբերը որևը կերպ զրկված չի առաջարկել ավելի մատչելի գին և արդյունքում հաղթող ճանանչվի:

Եթե պատկերացնենք, որ բողոք ներկայացրած կազմակերպությունը հաղթող է ճանաչվել մրցույթում, ապա ներկա պահին ծառայություն մատուցող կազմակերպությունը նույն պայմաններով, այսինքն 25 օրվա ընթացքում պետք է ապամոնտաժի իր կողմից տեղադրված սարքերը և հնարավորություն տա, որպեսզի նոր դաշտ մտած կազմակերպությանը իրականացնի իր գործունեությունը:

Այս պայմաններում մեծ կասկած է հարուցում բողոք բերող կազմակերպության հիմնավորվածությունը այն մասին, որ նոր մասնակցի համար սահմանված ժամկետը կարող է անհաղթահարելի խոչընդոտ հանդիսանալ և այն, որ վիճարկվող ընթացակարգի հրավերով նախատեսվել են այնպիսի պայմաններ, որոնք ձեռնատու են միայն ներկայիս ծառայություն մատուցող կազմակերպությանը:

Նշենք, որ այդ կազմակերպությունը նույն պայմաններում հաղթող է ճանանչվել մի մրցույթում, որտեղ մասնակցել են այնպիսի կազմակերպություններ, որոնք այդ բնագավառում ունեն գերիշխող դիրք, օրինակ՝ «Յուքոմ» կազմակերպությունը:

Սակայն դա նրանց որևէ կերպ չի խանգարել հաղթող ճանանչվելու համար:

Ինչ վերաբերվում է բողոքում տեղ գտած տեխնիկական բնութագրի որոշ պայմաններին, օրինակ հրավերով սահմանված այն պայմանը, որ 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն 25 օրվա ընթացքում: 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում:

Բողոքաբերը մատնանշել է թե համակարգի հաղորդման սարքերը ինչ քանակի օբյեկտներում են տեղադրվելու, ինչ քանակով և ինչ ժամկետով:

Բողոքաբերը նշել է, որ այս ձևակերպումը չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 3-րդ կետերին:

Նախ նշենք, որ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է՝ Գնման առարկայի բնութագրերը՝ որոնք պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Այսինքն ՊՊԳՎ-ն մատուցում է պայմանագրային ծառայություններ, ինչն իր հերթին նշանակում է, որ այն ծավալները, որը իրականցանում է ՊՊԳՎ-ն կարող են ենթարկվել փոփոխության ծավալային առումով:

Պայմանագրային օբյեկտները կարող են նվազել, կարող են ավելանալ, ինչի արդյունքում էլ կարող է նվազել և ավելանալ մրցույթով պահանջվող ծավալները, ուստի անհնարին է հստակ մատնանշել թե որքանով կավելանան պահպանվող օբյեկտների քանակը:

Պարզ է, որ խոսքը գնում է ողջամիտ քանակի և ժամկետների մասին և ակնհայտ է նաև, որ եթե ներկայացվի ողջամիտ չափանիշներից վեր պահանջներ, ապա դա կարող է դառնալ հիմք այն վիճարկելու: Սակայն այս պահին անհնարին է որոշել կամ ենթադրել թե որքան կարող է աճել օբյեկտների թիվը:

Ուստի նման պայմանները բխում են ՊՊԳՎ-ի կարիքներից և հանդիսանում են համարժեք և օբյեկտիվ, ինչը հաստատվել է նաև նախկինում նույն պայմաններով կնքված պայմանագրերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.12.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կարիքների համար գլոբալ ցանցի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):
2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» գնման առարկայի՝ «Տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման կենտրոնացված համակարգ»-ի համար սահմանվել են հետևյալ ընդհանուր պահանջները.

- Այն իրենից պետք է ներկայացնի ծրագրային փաթեթից և տվյալների հաղորդման սարքերից բաղկացած ամբողջական համակարգ:
- Համակարգի աշխատանքային ռեժիմը շուրջօրյա՝ 7/24:

- Պահպանվող օբյեկտներում տեղադրված ազդարարման համակարգերից ստացվող տվյալների հավաքագրման և հաղորդման նպատակով պետք է օգտագործվեն լրացուցիչ (միջանկյալ) սարքեր, որոնք կկարողանան միանալ տվյալ ազդարարման համակարգին, նրանից ստանալ և կենտրոնական սերվերին հաղորդել տվյալներ, ընդ որում նշված գործընթացը չպետք է խաթարի ազդարարման համակարգի բնականոն աշխատանքը:
- Համակարգը պետք է ունենա առանձին (կենտրոնական) սերվեր, որում տեղադրված կլինի ծրագրային փաթեթը և կպահվի տվյալների բազան:
- Սերվերը պետք է տեղադրվի ՊՊԳՎ–ի կողմից տրամադրված հատուկ տարածքում:
- Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի կողմից. հակառակ դեպքում մասնակիցը պետք է ունենա արտադրողի կողմից տվյալ համակարգով վերոնշյալ ծառայությունը մատուցելու, համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորություն և իրավունք (լիազորություն) ՊՊԳՎ-ում գործող այլ ծրագրային համակարգերի հետ ինտեգրման նպատակով:
- Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝
- բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
- օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
- յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

3. Նույն հավելվածով որպես համակարգի տեղադրմանը ներկայացվող պահանջ սահմանվել է, որ պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում: 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սօս Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 19.12.2019թ. բողոքը և ի լրումն բողոքի գրությունը, ՀՀ ոստիկանության դիրքորոշումը, «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվողաշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանութ-յանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայութ-յան դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ ոստիկանության կարիքների համար գլոբալ ցանցի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» գնման առարկայի՝ «Տեղեկատվության փոխանցման և տագնապների ազդարարման կենտրոնացված համակարգ»-ի համար սահմանվել են հետևյալ ընդհանուր պահանջները.

- Այն իրենից պետք է ներկայացնի ծրագրային փաթեթից և տվյալների հաղորդման սարքերից բաղկացած ամբողջական համակարգ:
- Համակարգի աշխատանքային ռեժիմը շուրջօրյա՝ 7/24:
- Պահպանվող օբյեկտներում տեղադրված ազդարարման համակարգերից ստացվող տվյալների հավաքագրման և հաղորդման նպատակով պետք է օգտագործվեն լրացուցիչ (միջանկյալ) սարքեր, որոնք կկարողանան միանալ տվյալ ազդարարման համակարգին,

նրանից ստանալ և կենտրոնական սերվերին հաղորդել տվյալներ, ընդ որում նշված գործընթացը չպետք է խաթարի ազդարարման համակարգի բնականոն աշխատանքը:

- Համակարգը պետք է ունենա առանձին (կենտրոնական) սերվեր, որում տեղադրված կլինի ծրագրային փաթեթը և կպահվի տվյալների բազան:
- Սերվերը պետք է տեղադրվի ՊՊԳՎ–ի կողմից տրամադրված հատուկ տարածքում:
- Ծրագրային համակարգը և քարտեզը պետք է մշակված լինեն մասնակցի կողմից. հակառակ դեպքում մասնակիցը պետք է ունենա արտադրողի կողմից տվյալ համակարգով վերոնշյալ ծառայությունը մատուցելու, համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորություն և իրավունք (լիազորություն) ՊՊԳՎ-ում գործող այլ ծրագրային համակարգերի հետ ինտեգրման նպատակով:
- Համակարգը պետք է ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որպեսզի հիմնական ծրագրային համակարգում աշխատեն երեք ֆունկցիաներ՝
- բռնող խմբերի մեքենաների և պահպանվող օբյեկտների ցուցադրում նույն քարտեզի վրա (հիմնական համակարգում)
- օպերատորի կողմից տագնապ ազդանշանը այլ բռնող խմբի հանձնելու դեպքում համակարգը ավտոմատ որոշի և օպերատորին ցուցադրի օբյեկտին ամենամոտ բռնող խմբերի ցանկը՝ ըստ գտնվելու հեռավորության
- յուրաքանչյուր տագնապին արձագանքելու դեպքի համար ավտոմատ հաշվի բռնող խմբի տեղ հասնելու ժամանակը:

Նույն հավելվածով որպես համակարգի տեղադրմանը ներկայացվող պահանջ սահմանվել է, որ պահպանվող 3820 օբյեկտներում համակարգի տվյալների հաղորդման սարքերի տեղադրման աշխատանքները պետք է ավարտվեն համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 25 օրվա ընթացքում: 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում:

Ուսումնասիրելով բողոքով ներկայացված խնդիրները և Ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, վերջինս կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի***

կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը, գտնում եմ, որ 25-րդ օրվանից հետո սարքավորումները տեղադրվելու են ըստ պատվիրատուի կողմից լրացուցիչ ներկայացված պահանջի՝ վերջինիս կողմից սահմանված քանակությամբ և ժամկետներում սահմանումը հստակ չէ, քանի որ հրավերով սահմանված սարքավորումների լրացուցիչ քանակները հստակ չմատնանշելը հանգեցնում է տվյալ Ընթացակարգին մասնակցելու իրավունքի իրացման անհիմն խոչընդոտների առաջացմանը: Մասնավորապես՝ լրացուցիչ քանակների հստակ սահմանված չլինելը (առավելագույն քանակ) կստեղծի մասնակիցների կողմից մատուցվելիք ծառայության համար առաջարկվող գնի ճշգրիտ հաշվարկման խոչընդոտներ, որն էլ իր հերթին կհանգեցնի մրցակցության սկզբունքի խախտմանը:

Մինչդեռ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) ……

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Գտնում եմ, որ նման պայմաններում «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով ընթացակարգի հրավերը հակասում է գնումների գործընթացի կազմակերպման սկզբունքներին:

Միաժամանակ Բողոքաբերը նշել է, որ տեխնիկական բնութագրում ամրագրված հետևյալ արտահայտությունը՝ «ընթացակարգով պահանջված համակարգը պարտադիր ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ կամայականությունների տեղիք է տալիս, քանի որ ընթացակարգով պահանջված համակարգը ՊՊԳՎ-ում գործող և մեկ այլ ընկերության կողմից մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի հետ ինտեգրելը հնարավոր է միայն մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան կոդերը

/протокол/ ունենալու դեպքում: Մինչդեռ ակնհայտ է, որ այդ կոդերը ունի բացառապես այդ համակարգը պատրաստած և տեղադրած ընկերությունը:

Այս տեսանկյունից գտնում եմ, որ բողոքաբերի նկատառումն հիմնավոր է, քանի որ եթե Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգով պահանջված համակարգը պարտադիր ինտեգրվի ՊՊԳՎ-ում գործող մեքենաների GPS վերահսկման համակարգի հետ, որը հնարավոր է միայն մեքենաների վրա տեղադրված GPS վերահսկման համակարգի համապատասխան ծածկագրերն ունենալու դեպքում, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով պետք է հստակ սահմանվեն համապատասխան ծածկագրերի տրամադրման եղանակները և ժամկետները:

Միաժամանակ հիշյալ դրույթի սահմանումը անհրաժեշտ է նաև կողմերի իրավունքները և պարտականությունները հստակեցնելու, կամայականությունը բացառելու, ինչպես նաև կատարողի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը հետագայում գնահատելու համար:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն դիտարկմանը, որ տեսականորեն հնարավոր չէ 25 օրվա ընթացքում ողջ Հայաստանի տարածքով պահպանվող 3820 օբյեկտներում տեղադրել համակարգի տվյալների հաղորդման սարքեր, ապա այս տեսանկյունից գտնում եմ, որ Ընկերության նման պնդումն սուբյեկտիվ է, քանի որ Պատվիրատուի կողմից նման պահանջի սահմանումը չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, քանի որ վերջինիս կողմից պահպանվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի «ը» պարբերությամբ սահմանված նվազագույն պահանջը, այն է՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20 օրացուցային օր, հետևաբար գտնում եմ, որ սույն մասով Ընկերության բողոքն հիմնավոր չէ;

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Սou Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ «Գլոբալ ցանցի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԲՄԾՁԲ-2020-ՊՊԳՎ/ՑԱՆՑ-3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**